



# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԱԹ, 15 ԱՊՐԻԼԻ 2016Թ.  
№ 11 (387)

ՃՅ ՍՅ էյ Յ Կ  
Յ է՝ԷՇԷ չԷ ՍՅ ՆԱ  
á±òÛ Bâôÿÿ չ

ԹՉ Օà è² ÐÛ² Û

## Անկախար մնացին հայրենի գյուղի շենացման Նրա ծրագրերը

Եղեռնագործ թշնամին 1915թ. ապրիլի 24-ը ցանկացավ կրկնել նաև 2016թ. ապրիլի 1-ին՝ լայնամասշտաբ հարձակում ծավալելով դարաբաղա-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով: Հայրենի սահմանները պաշտպանելու շտապեցին նաև Սիսիանի երկրապահ կամավորականների միության քաջարի մարտիկները՝ ԵՎՄ մասնաճյուղի նախագահ Մայիս Միրզոյանի մասնակցությամբ:

Մայիս Միրզոյանը ծնվել է 1956թ. մայիսի 1-ին Սյունիքի մարզի Դարբաս գյուղի Արզունյանների տոհմի Միրզոյանների ընտանիքում: Տոհմը Դարբաս գյուղում նշանավորվել է ժամանակին իր հեղինակավոր ներկայացուցիչների գործունեությամբ: Ազգակից պապերից Շամիր Արզունյանը համագյուղացիների կողմից հիշատակվում է որպես անցած դարասկզբի տանուտեր (քոխվա): Նա Լորագետի ավերիմ սփռված գյուղերի բնակչությանն արգելում էր պղտորել գուլալ գետը, հայտնի էր նաև համայնքներում օրինազանցներին կարգի հրավիրելու իր նշանավոր «շալախոսով»: Պապը՝ Աշոտ Արզունյանը, գյուղի հաղթանակ տղամարդկանցից էր, ով անցած դարի կեսերին, շուրջ 15 տարի, աշխատել է Դարբասի գյուղխորհրդի նախագահ:



4 հոկտեմբերի 2015թ., Դարբաս

Պապերի գործը շարունակող Մայիս Միրզոյանն իր մանկությունն ու պատանեկությունն անց է կացրել հայրենի գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Դարբասի միջնակարգ դպրոցում՝ 1963-1973թթ.: 1973-1974թթ. սովորել է Երևանի թիվ 9 պրոֆտեխնունմանում, 1975-1976թթ. ծառայել խորհրդային բանակում: 1977թ. աշխատանքի է անցել Տաթևիկի շինարարությունում՝ էլեկտրիկ, իսկ շինարարության ավարտից հետո՝ Շամբեիկում՝ մե-

քենավար, այնուհետև՝ գլխավոր վահանակի էլեկտրիկ: 1979թ. Շամբեիկում նշանակվել է հերթափոխի պետ՝ համատեղելով նաև ուսումը Սիսիանի պոլիտեխնիկումում: 1988 թվական. Դարաբայան շարժումը սկսվելու առաջին իսկ օրերից հայ կամավորական խմբերի հետ մասնակցեց հայրենի սահմանների պաշտպանությանը, ինչպես նաև Բերդաձորի պաշտպանական գործողություն-

էջ 3

## Եթե Նոր ոսկեգույնում լինի, Արցախի զինված ուժերը կհասցնեն անհրաժեշտ հարվածը

Չնայած լարված իրավիճակին ու զբաղվածությանը, երեկ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը ժամանակ է գտել ՊԲ օպերատիվ տեղեկատվական կենտրոնում հանդիպելու Արցախում իրենց առաքելությունը կատարող Հայաստանի եւ արտերկրի ավելի քան 8 տասնյակ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Երկրի ղեկավարը, կարեւորելով զանգվածային լրատվամիջոցների դերը Արցախում տեղի ունեցող իրադարձությունները միջազգային համայնքում ներկայացնելու գործում, իր եւ ԼՂՀ իշխանությունների անունից երախտագիտություն հայտնեց: Արտերկրի լրագրողներից մեկի այն հար-

ցին, թե նախագահը գիտե՞ր, արդյոք, որ Ադրբեջանը հարձակման է պատրաստվում, նախագահ Բակո Սահակյանը պատասխանեց, որ ովքեր տեղյակ են երկրի առաջին դեմքերի աշխատանքային առօրյային, գիտեն, որ այն տեսնում է մինչև ուշ գիշեր, նույնիսկ երբեմն՝ մինչև առավոտ: «Ապրիլի 2-ին, մտավորապես ժամը 1-ի կողմերը որոշակի տեղեկություններ ունենալով, որ հակամարտության գոտում հարող տարածքում ադրբեջանական զինուժի եւ տեխնիկայի ակտիվ շարժ է նկատվում, ես իմ մտ իրավիճակի ուժային կառույցների ղեկավարներին՝ պաշտպանության նախարարին, անվտանգության ծառայության տնօրենին եւ գլխավոր ոստիկանապետին: Հանգվեցինք, որ մեզ հասած տեղեկություն-



Բակո Սահակյան, ԼՂՀ նախագահ

էջ 2



# ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ. «Չայրենասիրությունն անթեղված էր մեր ժողովրդի մեջ, բավական էր մի կայծ, որ նորից այն բռնկվի»

1994 թվականի մայիսից տարածաշրջանում հաստատված փխրուն խաղաղությունը մի օր վերածվելու էր ռազմական բախման, եւ դա տեղի ունեցավ ապրիլի լույս 2-ի գիշերը, երբ Ադրբեջանը լայնածավալ հար-

ձակում ձեռնարկեց Լեռնային Ղարաբաղի սահմանի ամբողջ երկարությամբ: Մտավախությունը, որ այն ոգին ու միասնականությունը չեն լինի, ինչի շնորհիվ 1994-ին արձանագրվել է հաղթանակն Արցախյան

պատերազմում, հօրս ցնդեց: Ականատես եղանք մի աննախադեպ միասնականության, համախմբումի, որն արձանագրվեց նաեւ Սյունիքի մարզում: Չորս օր տեւեցին ռազմական գործողությունները, բայց դրանից հետո եւս սյունեցի կամավորները մարտական դիրքերում են ու շարունակում են հերթապահել: Ապրիլի 3-ի երեկոյան ճակատ մեկնող կամավորների խումբը գլխավորում էր Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ում հետ էլ մեր հարցազրույցը բառայա պատերազմի եւ դրանից հետո ստեղծված իրավիճակի մասին է:

– Ապրիլյան չորս օրերին Սյունիքի մարզի երկրապահներից եւ ժամկետային զինծառայողներից զոհեր եղան, անդառնալի կորուստներ, այդ ցավը նաեւ Ձեզ է պատել, մասնակցել եք նահատակների հուղարկավորություններին, փորձել սփոփել նրանց հարազատներին, ի՞նչ ունեք փոխանցելու մեր թերթի ընթերցողներին:

– Շատ ծանր էր այդ ամենը բուրիս համար, բայց պատերազմն էլ իր չգրված օրենքներն ունի, պատերազմում անխուսափելի են զոհերը: Սյունիքից զոհեր շատ եղան: Սա է իրողությունը: Համոզված եմ, որ մարտական գործողությունների ժամանակ այդքան կորուստ չէինք տա, բայց հակառակորդն օգտագործեց անօդաչու թռչող սարքեր, ինչը նորություն էր հայ-ադրբեջանական հակամարտության ողջ ընթացքում: Դրա «հակաթույնը» տղաները չունեին, անտեղի զոհեր ունեցանք. սա է տխրեցնողը: Կարող եմ ասել, որ զոհվածների հարազատները եւս այն գիտակցումն ունեն, որ այսօրվա պատերազմը տարբերվում է 1990-ականների պատերազմից. նկատի ունեն Ադրբեջանի՝ նորա-

Լուսնակաբ: Ս. ՍՊՐՈՍՅԱՆ



## «Սյունյաց երկիր»-ը՝ հակամարտության գոյում

ագգային ու պետական իրենց առաքելությունը: Առաջնագծում հենց բանակային ուժերն էին, հենց այդ ուժերն էին դիմակայել հակառակորդի՝ արդիական սպառազինությամբ հագեցած զորամիավորներին ու հետ շարտել նրանց:

Կարելի է ասել՝ կամավորականների՝ առայսօր շարունակվող հոսքը պայմանավորված չէր կամ պայմանավորված չէ բանակային ուժերի վիճակով: Իրականում կամավորականներն ամենուր (որտեղ մենք եղանք) օգնողի, օժանդակողի, ռեզերվի, նախապատրաստվողի դերում էին, որը մույնպես շատ կարելու է:

Չորրորդ՝ մենք, անշուշտ, հեռու ենք փորձագիտական եզրակացություններ անելու մտադրությունից, բայց չի կարելի չնշել, որ հայոց սահմանն անխնայելի էր

Ադրբեջանի տրամադրության տակ եղած տանկերի, ուղղաթիռների համար: Այո, մեր հակատանկային ու հակաօդային միջոցները լրջորեն հակակշռում են թշնամու համապատասխան ուժերին, ինչն ակնհայտ դարձավ մարտական բազում գործողություններում:

Եվ վերջին տպավորությունն ու դիտարկումը. մեր ռեսուրսը՝ եւ քաղաքական ու դիվանագիտական, եւ զինական ու մարդկային, պետք է հնարավորինս խելամիտ օգտագործել: Կամավորականների աննախադեպ ձգտումը՝ լինել առաջնագծում եւ դիմակայել հակառակորդին, բացառիկ ռեսուրս է եւ անիրաժեշտ է նույնպես ռացիոնալ օգտագործել:

Միայն սթափ, սառնասիրտ եւ հավասարակշռված պահվածք, էջֆորիային՝ անգամ ներքին օգտագործման համար, ոչ...  
**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

էջ 4

# Եթե նոր ուրնձգություն լինի, Արցախի զինված ուժերը կհասցնեն անհրաժեշտ հարվածը

Մերը համահունչ են ժամանակի հետ, եւ նման դրսևորումներն առաջին անգամ չէ, որ արձանագրվում են հակառակորդի կողմից: Այնուհետեւ ՊԲ ղեկավարը, այցելելով իր աշխատասեյակ եւ մանրամասնորեն ուսումնասիրելով իրավիճակը, տեղեկացրեց, որ ժամը 3-ին թշնամին լայն ռազմագործողություններ է ծավալել շփման գծի երկայնքով: Ես շտապ խորհրդակցություն եմ հրավիրել եւ ՊԲ հրամանատարությանը հանձնարարել կասեցնել հակառակորդի հարձակումները ու ոչնչացնել դիվերսիոն ուժերին: Հետագայում հավանաբար գիտեք, թե իրադարձությունները ինչպես են զարգացել», – ասաց Բակո Սահակյանը:

Ի պատասխան հնչեցված այն հարցի, թե ինչ ակնկալիքներ ունի նախագահը միջնորդներից, Բ. Սահակյանը նշել է, որ խաթարված ձեւաչափի պայմաններում անհնար է հասնել հակամարտության լիարժեք ու արդարացի կարգավորման: «Այսօր էլ ենք մնում այդ համոզման: Դուք բոլորդ լավ գիտեք, որ Արցախը համարվում է հակամարտության լիիրավ կողմ ու հետեւաբար, վերջնականապես պիտի վերանայվի այդ պահանջը»: Նա ընդգծեց, որ առանց

արցախյան կողմի լիարժեք մասնակցության ոչ մի որոշում հնարավոր չէ կայացնել: Իսկ, արդյոք, կա՞ն երկրներ, որոնք հանդես են գալիս Արցախի հիմնախնդրի խաղաղ ու արդար կարգավորման օգտին: Այդ առնչությամբ Բ. Սահակյանն ասաց, որ նման բարեկամ երկրների թիվը բարեբախտաբար քիչ չէ, սակայն այսօր Արցախի ու նրա ժողովրդի անվտանգության երաշխավորը եղել ու մնում է Հայաստանը:

Նաեւ այսպիսի հարց ուղղվեց ԼՂՀ նախագահին. ռազմական գործողությունները մոտեցրի՞ն, թե՞ հեռացրին հակամարտության կարգավորումից: Բ. Սահակյանը հավաստիացրեց, որ Արցախը մշտապես կողմնակից է եղել խաղաղ ճանապարհով հարցի լուծմանը, ու Ստեփանակերտից երբեք պատերազմի կոչեր չեն հնչեցվել: «Մենք պատերազմում ենք խաղաղության համար եւ պատրաստ ենք հանուն մեր ժողովրդի արժանապատիվ ապագայի, հանուն մեր վերջնական նպատակի, ամեն գնով պահպանել երկրի անվտանգությունը, Արցախի սահմանների հուսալիությունը, իսկ որպեսզի հետեւողական լինենք մեր ձեռնարկումներում, երբեք չպետք է կորցնենք զգոնությունն ու

աշակրջությունը», – ընդգծեց նախագահը:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն Ադրբեջանի կողմից ի սկզբանե աղավաղված է ներկայացվում:

«Այս խնդիրը ծնվել է մեկ դար առաջ: Մենք պայքարում ենք ոչ թե տարածքների, այլ մեր հայրենի երկրի համար: Հնարավորություն ունեցել եմ ներկայացնելու, որ մենք Արցախում չենք իրականացնում ծառայություն՝ ուղղված պարզապես Արցախի բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովմանը. հայ ժողովուրդը պայքարում է իր արժանապատվության համար, եւ մենք այս պայքարի առաջամարտիկներն ենք, յուրահատուկ առաքելություն ենք իրականացրել եւ իրականացնում ենք: Այդ նույն գիտակցությամբ շարունակվելու ենք իրականացնել՝ հայրենիքը վեր դասելով ամեն ինչից», – ասաց ԼՂՀ նախագահը:

Նրա խոսքով՝ ԼՂ հարցի ելույթումն ազգային-ազատագրական շարժումն է, որում հայ ժողովուրդը զործում է միասին, մեկ ճակատով: «Չենք տարբերակում մայր Հայաստանի, սփյուռքի մեր քույրերին ու եղբայրներին արցախցիներից: Մենք մի ամբողջություն ենք եւ այսուհետ



էլ շարունակելու ենք այդ գիտակցությամբ կերտել մեր կյանքը եւ արձանագրելու հաջողություններ», – ասաց Արցախի նախագահը:

Նա ընդգծեց, որ հակամարտությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ չէ, այլ Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի, եւ Ադրբեջանին հաջողվել է արհեստականորեն ներքաշել Հայաստանի Հանրապետությանը: Բակո Սահակյանի խոսքով՝ այնպես չէ, որ Հայաստանն ամբողջապես չի ներկայացնում Արցախի շահերը, ընդհակառակը, Հայաստանն Արցախի Հանրապետության անվտանգության երաշխավորն է: «Պարզապես հակամարտությունն իր բնույթով այնպիսին է, որ բանակցությունների սեղան վերադառնալու մեր պահանջը բխում է տրամաբար-

նության դիրքերից. աշխարհում չկա որեւէ հակամարտություն, որտեղ լուծումները գտնվում են առանց հիմնական դերակատարի», – ասաց Արցախի նախագահը:

Եթե Ադրբեջանը հերթական անգամ խախտի իրադարձը, ապա Արցախի զինված ուժերը՝ մյուս ստորաբաժանումների հետ միասին, հասցնելու են անհրաժեշտ հարված, հայտարարեց Արցախի նախագահը: Վերջում Բ. Սահակյանն իր խոնարհումն է «փոխանցել» ադրբեջանական ազատագրության ժամանակ զոհված բոլոր հայրուհիների ընտանիքներին ու հարազատներին:

**Ղավիթ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**  
Ստեփանակերտ  
08-04-2016  
hnpres.am

# ՏԻԳՐԱՆ ՓԱՐՎԱՆՅԱՆ.

## «Պատրաստ եմք մարտական գործողությունների.

### վարահ եղեք՝ ջարդելու եմք հակառակորդի դուռնը եւ հետ շարքերը»

Ապրիլի 9-10-ին, գտնվելով դարաբաղա-ադրբե-ջանական հակամարտության հարավարեւելյան հատվածում, «Այոնյաց երկիր» թերթի ստեղծագործական խումբն առաջինն այցելեց ՀՀ զինված ուժերի 1-ին զորամիավորման հրամանատարական կետ եւ հարցազրույց ունեցավ զորամիավորման հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանի հետ:



ԼՍՄԱՎՈՐՆԵՐ Լ. ՍՈՐՈՑՅԱՆԻ

Չորամիավորման հրամանատարը, բնականաբար, բազմաբաղ եր: Հրամանատարական կետում կյանքը եռում էր, իսկ եռուզեռի կենտրոնում ինքն էր՝ գնդապետը:

Տիգրան Փարվանյանն ինքը սկսեց զրույցը՝ չսպասելով մեր հարցին. «Ցավում եմ մեր զորքերում մահացած զինվորների, կամավորականների համար: Յուրաքանչյուրի կորուստն անդառնալի է, օբյեկտ է մարում... Ափսոսանքս եմ հայտնում եւ ցավակցում բոլորի հարազատներին, մերձավորներին, մարտական ընկերներին: Ուխտագրուծ սելջուկը հերթական անգամ փորձեց ներխուժել մեր սրբազան հողը, բայց չկարողացավ, քանզի մեր զինվորներն իրենց կյանքի գնով, մինչեւ վերջին փամփուշտը կրակելով, կարողացան պահել վստահված դիրքերը: Եթե պետք լինի, նորից հայ զինվորը կպաշտպանի մեր սահմանների անձեռնմխելիությունը»:

– Պարոն գնդապետ, Դուք հրամանատար եք այն զորամիավորման, որի զորամասերն ու ստորաբաժանումներն ամենամոտն են առաջնագծին: Ինչպե՞ս եք գնահատում օպերատիվ իրավիճակը դարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծի հարավարեւելյան հատվածում:

– Կայուն, լարված...  
– Բայց չէ՞ որ հրադադարի պայմանավորվածությունն ձեռք բերվեց կողմերի միջև:

– Մի՞թե հնարավոր է վստահել մի ազգի, մի պետության, որտեղ ամեն ինչ կառուցված է ստի ու կեղծիքի վրա: Այդ ե՞րբ են նրանք հավատարիմ մնացել պայմանավորվածություններին:

Պատրաստ ենք մարտական գործողությունների. վստահ եղեք՝ ջարդելու ենք հակառակորդի դուռնը եւ հետ շարքերը:

– Ինչո՞վ է հիմա զբաղված զորամիավորումը:

– Առաջին բանակային զորամիավորումն ունի իր հստակ խնդիրները եւ կատարում է դրանք:

– Ապրիլի 2-ից մարտական գործողությունների գլխավոր ու արժանապատիվ կողմը հայոց զինվորականությունն է: Ինչպե՞ս է տղաների տրամադրությունը չորսօրյա ռազմական գործողություններից հետո:

– Ձինվորների մարտական ոգին շատ բարձր է, պատրաստ են պատժելու հակառակորդին, կասեցնելու ամեն մի ոտնձգություն:

– Ձեր հրամանատարության ներքո, որքանով տեսնում ենք, կան նաեւ կամավորական ջոկատներ: Ինչպե՞ս եք վերաբերվում այդ իրողությանը եւ որքանով են նրանք աջակցում Ձեզ մարտական խնդիրները կատարելու գործում:

– Ապրիլի 2-ից սկսած տեղի ունեցավ այն, ինչ սովորաբար տեղի է ունեցել հայ ժողովրդի ճակատագրական պահերին... Մեկերկու օրվա ընթացքում մեր ամբողջ ազգը միավորվեց ու մի բռունցք դարձավ: Հազարավոր կամավորականներ՝ ջոկատներ կազմած, հայտնվեցին կանոնավոր զորամասերի կողքին: Եթե անհրաժեշտություն լինի եւ թույլ տրվի, ապա ամբողջ հայ ժողովուրդը կդառնա կամավորական: Մենք ենք խնդրում, որ կանգ առնեն, չգան, սպասեն... Իսկ մեր տրամադրության տակ եղած ջոկատները պատրաստ են կատարելու հրամանատարության առաջադրանքը:

– Այս օրերին շատ խոսվեց հակառակորդի ժամանակակից ռազմական տեխնիկայի մասին, մի՞թե հենց դա է վճռելու հակամարտության ելքը:

– Անշուշտ, զենքը մնում է զենք, եւ արդիական զենքերն օգնում են

առաջադրված մարտական խնդիրների կատարմանը: Սակայն Արցախյան պատերազմի այս փուլում, որին մասնակից ու ակամատես ենք, իրենց նպատակին չծառայեցին դրանք: Ի վերջո միայն զենքով չէ, որ պատերազմ է մղվում, հաղթանակ կերտվում: Պատերազմների ժամանակ ամենաուժեղ մարտական զենքը, համոզված եղեք, կռվող զինվորի ոգին է, ինչն առկա է հայոց բանակի ամեն մի մարտիկի մեջ: Այդ ոգու շնորհիվ է, որ շեշտակիորեն նվազեցվեց հակառակորդի զինտեխնիկայի նշանակությունը:

– Տեսնում ենք, թե ինչ եռուզեռ է հրամանատարական այս կետում...  
– Այստեղ բոլորը զինվոր են՝ անկախ պաշտոնից, դիրքից: Բոլորը կատարում են մեր հրամանները եւ կատարում են բարձր պատասխանատվությամբ: Այլ կերպ չի էլ կարող լինել, քանի որ նոր իրավիճակում ենք:

Թիկունքի շունչն էլ այստեղ զգում ենք, թիկունք ասվածն էլ հարաբերական է, այն մարտական դիրքերի ու զինվորական կյանքի ուղիղ շարունակությունն է, չէ՞ որ յուրաքանչյուր հայ մարդ այս օրերին կանգնած է զինվորի կողքին...  
– Եվ Ձեր խոսքը զինվորների ծնողներին ու մերձավորներին, թիկունքում գտնվողներին:  
– Մաղթում եմ ուժ, կորով, համբերություն եւ հարատևություն այն ոգու, այն միասնության ու համախմբվածության, որին ակամատես ենք հատկապես ապրիլի 2-ից հետո: Նաեւ իմ շնորհակալությունն ու երախտագիտությունը բոլոր զինվորների ծնողներին՝ նման արժանապատիվ ու հայրենապաշտ սերունդ դաստիարակելու համար:

**Զրույցը՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ**

## Անկադար մնացին հայրենի գյուղի շենացման նրա ծրագրերը

Գերին: 1992թ. ակտիվ մասնակցություն ունեցավ հայոց ազգային բանակի կազմավորմանը: 1993թ. հունվարի 16-ին ծառայության անցավ ՀՀ պաշտպանության նախարարության N զորամասի պայմանագրային վաշտում՝ դասակի հրամանատար՝ ստանալով ավագ լեյտենանտի կոչում: 1993թ. մարտի 31-ին՝ Քելբաջարի ազատագրման ժամանակ, Վակունցի գյուղի համար մղվող մարտերի ընթացքում վիրավորվեց: Նույն օրվա հոկտեմբերին՝ ապաքինվելուց անմիջապես հետո, վերադարձավ ծառայության եւ նշանակվեց վաշտի հրամանատար: Մայիս Միրզոյանը մասնակցել է Ղարաբաղյան գոյամարտի բոլոր մարտերին եւ վերադարձել փառքով ու հաղթանակով: 1995-1996թթ. իր մասնակցությամբ ստեղծվեց Սիսիանի տարածաշրջանի երկրապահ կամավորականների միությունը, որի հիմնադիր նախագահն էր:

1996 թվականին, ստանալով կապիտանի կոչում, նշանակվեց N զորամասի մարտական պատրաստության խմբի պետ: 1997թ. նշանակվեց ՀՀ ՁՈՒ 4-րդ բանակային կորպուսի ուսումնական կենտրոնի պետ: 2011թ. անցավ կենսաթոշակի՝ փոխգնդապետի կոչումով:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել է պետական ու կառավարական մի շարք պարգևների:

2012թ. սեպտեմբերի 9-ին ընտրվել է Ղարաբաղ համայնքի ղեկավար: 2015թ. համատեղության կարգով նշանակվել է ԵԿՄ Սիսիանի մասնաճյուղի նախագահ: Ամուսնացած էր, ունի 4 զավակ՝ 3 դուստր եւ 1 որդի:

2016թ. ապրիլի 2-ին Մայիս Միրզոյանը, անտեսելով սրտի բարդ վիրահատությունից դեռեւս չամբողջացած ցավը, ինչպես նաեւ իրեն վստահված պատասխանատու պաշտոնները, առանց հապաղելու, իր մարտական ընկերների հետ մեկնեց Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի պաշտպանության առաջին գիծ՝ 90-ականներին կիսատ թողած գործն ավարտին հասցնելու համար, քանի որ քաղաքացիական կյանքում չէր համակերպվում Ղարաբաղյան պատերազմի՝ չակերտավոր զինադադարի ընթացքում թշնամու կլտի պահվածքից շարունակ գոհվող անմեղ զինվորների կորստի հետ: Ապրիլի 4-ին, ցավոք, Ստեփանակերտից Թալիշ մեկնելու ճանապարհին՝ Թալիշի վարչական տարածքում, թշնամու կողմից կիրառած անօդաչու թռչող սարքի ռմբակոծությունից իր զինակիցների հետ գոհվեց նաեւ Մայիս Միրզոյանը՝ կյանքի 60-րդ գարունը չբոլորած ու իր երազած հաղթանակի, նաեւ՝ խաղաղության բերկրամբը չտեսած:

Անկատար մնացին հայրենի գյուղի շենացման նրա ծրագրերը... 2016թ. ապրիլի 6-ը դարձավ մի անմոռանալի սգո օր: Սիսիանի կենտրոնական հրապարակը վերածվեց բազմահազար այրուցեցների ողբի ու ցավի հավաքատեղիի, որտեղ հավաքվել էին՝ հրաժեշտ տալու մեր անմոռաց քաջերին: Այնուհետեւ սգո թափորը շարժվեց Սիսիանի գոհված ազատամարտիկների պանթեոն, եւ հողին հանձնեցին գոհված սիսիան-

ցի կամավորականներին: Թվում է՝ դեռ պիտի վերադառնա մեր գյուղապետը, քանի որ վերջին անգամ՝ մարտի 31-ին, գյուղապետարանի գրասենյակում նա մտախոհ սասց. «Այսօր պիտի գնամ Սիսիանի պանթեոն՝ հրամանատարիս՝ Վուրգ Ոսկանյանի շիրմին, քանի որ երբ ես Քելբաջարում վիրավորվեցի, հրամանատարս գոհվեց»:

Այս խոսքերով նա բաժանվեց մեզանից: Ել չհանդիպեցինք, բայց նա հավերժ կմնա մեզ հետ:

Երջանիկ աճունով հայրը եւ հոգատար Գոհարիկ մայրն իրենց երեք որդուն՝ Մայիսին, Մարտելին ու Մարատին, դեռ մանկուց դաստիարակել էին հայրենասիրական ոգով: Մայիսին հրաժեշտ տալիս նրանք սասցին. «Գնաս բարով, որդիս, հայրենիքի համար գոհվեցիր, մենք հպարտ ենք քեզանով»:

Եղբայրը՝ Մարտել Միրզոյանը, նույնպես քաջարի զինվոր է: Ղարաբաղյան շարժման ժամանակ երկու եղբայրներով կռվում էին թշնամու դեմ: Մարտելը հերոսական «Արաբո» ջոկատի շտաբի պետն էր: Մեծ է նրա ներդրումը հայրենիքի պաշտպանության եւ Ղարաբաղի ազատագրման գործում: Հիմա էլ, վրեժը սրտում, շտապում է պաշտպանել հայրենիքը:

Մայիսի որդին՝ Հայկ Միրզոյանը, շարունակում է հոր կիսատ թողած գործը: Նա ծառայում է բանակում: Գիշտ է, շատ ծանր է հոր կորուստը, բայց չի հուսալքվել եւ լի է վճռակա-նությամբ:

Մայիս Միրզոյանը երբեմն շտապում էր տուն, երբ երեւանից ժամանում էին նրա գեղեցիկ ու կայտառ զույգ թոռնիկները: Այդ օրերին նրա ուրախությանն ու հրճվածքին չափ ու սահման չկար: Նվիրված ու հավատարիմ հայր էր ու նույնպիսի պապիկ: Մեր գյուղապետը ոչ միայն ընտանիքում ու տանը, այլեւ կյանքում ու շրջապատում լավագույն անձնավորություն էր՝ օժտված մարդկային բարձր արժանիքներով: Անձնուրաց ու պատասխանատու էր հայրենիքի ու ժողովրդի հանդեպ, զուսպ էր ու անկաշառ՝ մաքրամաքուր սրտով ու հոգով նվիրված ընկերներին ու շրջապատին:

Կյանքը շարունակվում է, մենք էլ շարունակում ենք աշխատել, բայց առանց Մայիս Միրզոյանի: Ամեն օր շտապում ենք աշխատանքի՝ սպասելով մեր գյուղապետին, սպասում ենք լուռ, յուրաքանչյուրս մտքով գրուցում նրա հետ, բայց պատասխան չի սլվում գրասենյակում...  
Մեծ ցավ ապրեց մեր համայնքը՝ կորցնելով նման մարդու ու ղեկավարի: Ոչ պակաս ցավ ապրեցինք նաեւ՝ կորցնելով մեր համազուտացի մեկ ուրիշ հայրենասերի՝ Սեդրակ Սերգեյի Արյանի:

Համոզված եմ՝ երբեք չենք մոռանա մեր քաջարի տղաներին եւ մեր գործով ու նվիրումով բարձր կպահենք նրանց հիշատակը:  
Թող Աստված քիչ չհամարի ու բավարարվի նրանցով, ովքեր դրախտ գնացին եւ դարձան հայոց լինելիության հավերժական ուղեկիցը:

**ՍԵՆԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**  
**Ղարաբաղ համայնքի ղեկավարի տեղակալ**





ՏԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

# Հանդիպեցինք նաև Արարարի մարզի Մարմարաշեն գյուղի կամավորականներին



Չախից՝ Կարեն Հարությունյան, Արսեն Հարությունյան, Սարգիս Հարությունյան, Մայիս Ղարիբյան, Կարեն Ռաշոյան:

1990-ականների Արցախյան պատերազմի վետերաններ են:

Բարձր տրամադրություն ունեին, հենց նոր էին վերադարձել վարժանքներից, պատրաստ էին կատարելու մարտական առաջադրանք:

Կամեցան «Այունյաց երկիր» թերթի միջոցով ողջույններ փոխանցել իրենց մերձավորներին ու համագյուղացիներին՝ ցանկանալով համբերություն, սառնասրտություն:

Մարմարաշենի կամավորականների ցանկությունը հաճույքով ենք ի կատար ածում:

## ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

### «Մեզ առաջադրված խնդիրը կատարելու համար որեւէ պրոբլեմ կամ խոչընդոտ չկա»

«Այունյաց երկիրը» շարունակում է կապ պահպանել այսուհետ կամավորականների հետ, ովքեր գտնվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում՝ ԼՂՀ ՊԲ մարտիկների հետ պաշտպանելով Արցախի անձեռնմխելիությունը: Հերթական կապը մեզ հաջողվեց հաստատել քաջանուն զնդապետ Մելիքսեթ Պողոսյանի (Մելոյի) հետ:



– Պարոն զնդապետ, մեծ դժվարությամբ կարողացանք կապվել Ձեզ հետ, կարծեք կապի խնդիր կա...

– Չէ, նման խնդիր չկա, պարզապես շարժման մեջ ենք անընդհատ, և տեղ-տեղ, բնականաբար, կապն ընդհատվում է:

– Ի՞նչ հանձնարարություն է կոնկրետ դրված Ձեզ վրա, և որտե՞ղ եք գտնվում:

– Գործիս, Քաջարանի և Մեղրու ջոկատների միացյալ հրամանատարությունն է դրված ինձ վրա, եղմիկներում ենք՝ դիրքերում:

– Երեկ հեռախոսային խոսակցություն ենք ունեցել Մեղրու կամավորականների հրամանատար Արշավիր Հովհաննիսյանի հետ, բայց Քաջարանի ջոկատի հրամանատար, Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանի հետ չի հաջողվում կապվել առաջին իսկ օրվանից:

– Քաջարանի 55 հոգուց բաղկացած ջոկատը, Վարդան Գեւորգյանի հրամանատարությամբ, նույնպես առաջնագծում է և փայլուն ձեռով կատարում է առաջադրված խնդիրը: Ներքին կապ ունենք, ջոկատի տրամադրությունը բարձր է, անհանգստանալու կարիք չկա:

– Ինչպե՞ս եք գնահատում օպերատիվ իրավիճակը սահմանի այդ հատվածում:

– Մեզ վստահված տեղամասում այս պահին իրավիճակը հանգիստ է, մարդկանց տրամադրությունը՝ զերբազանց: Հիմա զբաղված ենք ինժեներական բնույթի լրացուցիչ աշխատանքներով՝ դիրքերի պաշտպանման կարևորությամբ ամրապնդում, խրամատների ընդլայնում, նոր հենակետերի հիմնում: Ամեն մի պոստ

ունի իր պատասխանատուն, և ծանայությունն ընթանում է ստեղծված իրավիճակին համընթաց:

– Դուք տեղյակ եք, որ այսօր ժամը 15-ից 20-ը հրադադար է հայտարարվել՝ զոհվածներին հայտնաբերելու, անհայտ կորածների խնդրով զբաղվելու համար:

– Ժամը 14-ի դրությամբ նման տեղեկություն ես պաշտոնապես չեմ ստացել: Մենք մեր խնդիրն ունենք, ինչով էլ զբաղված ենք:

– Ի՞նչ կասեք տղաների տրամադրության մասին. դա հիմա շատ է հետաքրքրում մեզ:

– Մարտական վիճակում են... Ամեն ինչ նորմալ է, մեզ առաջադրված խնդիրը կատարելու համար որեւէ պրոբլեմ կամ խոչընդոտ չկա:

Բոլորը զգում են, թե պատասխանատվության ինչ բեռ է դրված մեր ուսերին: Բոլորը պատրաստ են արժանապատվորեն կատարելու առաջադրված մարտական խնդիրը:

– Կամավորականների մեծամասնությունն Արցախյան պատերազմի վետերաններ են, բայց կան նաև երիտասարդներ, ովքեր նման իրավիճակում առաջին անգամ են, զենքին՝ ոչ այնքան վարժ:

– Առաջին իսկ օրվանից երիտասարդ կամավորականների հետ առաձեռնահատուկ աշխատանք ենք կատարում, ժամանակ լինելու դեպքում՝ նաև ուսուցանում: Այնպես որ ջահելներն էլ մարտականորեն են տրամադրված և գիտեն իրենց անելիքը:

– Ձոռերի և վիրավորների մասին տեղեկությունները հավանաբար անդրադառնում են ազատամարտիկների տրամա-

դրության վրա...

– Դա բնական է, բայց ես յուրաքանչյուր ոք հասկանում է՝ պատերազմ է եւ, ցավոք, առանց վիրավորների ու զոհերի չի լինում: Իհարկե, տա Աստված, որ ոչ մի վիրավոր եւ զոհ այլևս չունենանք:

Շատ կարեւոր է, որ ազատամարտիկները կամավորության սկզբունքով են եկել, գիտակցաբար, սրտի կանչով:

Արցախյան պատերազմի վիրավորներ էլ կան մեր ջոկատներում՝ Սիմոնյան Սլավ, Շիրինյան Սամվել, մեկի աչքը չկա, մյուսի՝ թելը, բայց եկել են, և ես չեմ կարողացել նրանց մերժել:

Ազատամարտիկների ավագ սերունդը, որ 25 տարի առաջ գեներ վերցրել ու կանգնել սահմանին, չի կարող այսօր անտարբեր լինել:

– Ի՞նչ կցանկանալիք փոխանցել թիկունքում գտնվողներին:

– Շատ ոգեւորիչ է համայն հայրենիքի պատասխանատվությունը, ճիշտ է ասված՝ հայոց ազգային ոգին միանգամայն նորոպի է արթնացել: Դա մեզ պարտավորեցնում է:

Առիթից օգտվելով նաև շնորհակալություն են հայտնում բոլորին, ովքեր իրենց հնարավորությունների սահմաններում աջակցում են սահմանում կանգնած ազատամարտիկներին, իսկապես, որեւէ խնդիր չունենք, և դրանում յուրաքանչյուրիդ անկեղծ ներդրումը կա:

Մեկ անգամ եւս շեշտեմ՝ տղաները գիտակցաբար են գեներ վերցրել և կանգնել դարաբաղա-ադրբեջանական սահմանին:

Ասեմ նաև՝ ամեն օր թիկունքից հեռախոսազանգերով նորանոր առաջարկություններ են դիմումներ ենք ստանում. հարյուրավոր մարդիկ Սյունիքի տարբեր քաղաքներից եւ գյուղերից ուզում են միանալ հանուն Արցախի մղվող նորօրյա պայքարին... Դա արդեն հաղթանակ է, դա արդեն հայոց հավաքական ուժի դրսևորում է...

– Աստված Ձեզ եւ բոլոր ազատամարտիկներին պահպան:

Զրույցը՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ 08 ապրիլի 2016թ.



### ՎԱՀԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ. «Մեր հոսպիտալն իրադարձությունների յուրաքանչյուր զարգացման դեպքում պատրաստ է իր առաքելությունը պատվով կատարել, թեւս ցանկալի չեն ռազմական գործողությունների վերսկսումն ու ծավալումը»

Ղարաբաղ-ադրբեջանական սահմանի երկայնքով ռազմական գործողությունները վերսկսելուց հետո հանրության ուշադրության կենտրոնում են վիրավորները, նրանց բուժման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Ռազմաճակատի հարավարեւելյան թևում վիրավոր զինվորներին ընդունելու և բուժական առաջնահերթ քայլեր կատարելու խնդիրը դրված էր ԼՂՀ պաշտպանության բանակի հոսպիտալներից մեկի վրա, որի պետի՝ փոխգնդապետ Վահան Վարդանի Ոսկանյանի հետ հանդիպեցինք ապրիլի 9-ին:

– Պարոն Ոսկանյան, հիմա, ինչպես տեսնում ենք, զբաղված եք առօրյա գործերով, բայց ենթադրում ենք նաև, որ ապրիլի 2-ի գիշերը հոսպիտալում նույնպես սկսվեց ժամանակի նոր հաշվարկ:

– Այո, այդպես է: Հակառակորդի առաջին հարվածներից անմիջապես հետո մենք անելիք ունեցինք:

– Այս պահին, ճիշտն ասած, մեզ նախելառաջ հետաքրքրում է կարելու մի հարց՝ ունե՞ք ծանր հիվանդներ:

– Բարեբախտաբար ծանր հիվանդներ չունենք:

Ունենք հիվանդներ տարբեր վնասվածքներով, ովքեր պատշաճ բուժում են ստանում: Եվ բոլոր հիվանդներին, փառք Աստծո, ի վիճակի ենք բուժել մեր հնարավորություններով:

– Այս ընթացքում զոհեր ունեցա՞ք:

– Մահ չենք ունեցել, ովքեր հասցվել են մեր հոսպիտալ, վիճակից հանել ենք և փրկել: Մի մասն ապաքինվել ու գնացել է, մյուս մասը շարունակում է բուժում ստանալ:

Ուզում են տեղյակ պահել՝ մեր խնդիրն է՝ որակավորված բուժօգնության կազմակերպում, որակավորված բուժտարիանման փուլին բնորոշ խնդիրների լուծում: Այն զինժառանգները, ովքեր նեղ մասնագիտական բուժման կարիք են ունենում, տեղափոխվում են այլ հոսպիտալներ կամ հիվանդանոցներ:

– Այս տարածաշրջանում, Ձեր դեկավարած հոսպիտալից բացի, նման առաքելությամբ ուրիշ հոսպիտալ կամ հիվանդանոց ունե՞ցե՞ք:

– Հաղորդի քաղաքացիական հիվանդանոցն է. աշխատում ենք համագործակցված:

– Եթե հաջողում եք լուծել հոսպիտալի առջեւ ծառայած խնդիրները, ուրեմն որակյալ կարգերով ապահովված եք. ճիշտ է մեր ենթադրությունը:

– Իրոք, որակյալ կարգերով ապահովված ենք: Այդուհանդերձ, ապրիլի 2-ից հետո մեզ մոտ երեւանից եկավ երեք կամավորական բժիշկ՝ 6-րդ հիվանդանոցի տնօրեն Տարոն Տոնոյանը (առաջին իսկ օրվանից), 3-րդ հիվանդանոցի վնասվածքաբան Արայիկ Լեւոնյանը, Ծերեթելիի հիվանդանոցի քիթ-կոկորդ-ականջի մասնագետ Անդրանիկ Սերոբյանը: Նրանց ներկայությունը ոգեւորիչ է, մարդիկ իրենց կամքով եկել և օգնում են մեզ:

– Զեր հոսպիտալի համբավը մեզ հայտնի էր մինչեւ ապրիլի 2-ը. ապահովված եք ծա-



Մանակակից բուժարքավորումներով...

- Մեր հոսպիտալը, անկեղծ լինեմ, ոչնչով չի գիջում մայրաքաղաքային հոսպիտալներին...

- Ավելորդ ենք համարում դեղորայքի մատակարարման մասին հարցնել՝ համոզված լինելով, որ խնդիրներ չեն ունենա այդ առումով:

- ԼՂՀ ՊԲ ռազմաբժշկական ծառայության կողմից դեղորայքի մատակարարումն ուղղակի գերազանց է, դեղորայքի խնդիր չենք ունեցել և չունենք:

Քիչ առաջ խոսեցինք կամավորական բժիշկների մասին, բայց մոռացա՞նք ասել՝ ապրիլի 2-ից սկսած բազմաթիվ բժիշկներ են ցանկություն հայտնել մեզ մոտ գալու և մեզ օգնելու պատրաստակամությամբ...

- Տեսնում ենք՝ հոսպիտալի բակում քաղաքացիական անձինք կան, հավանաբար հիվանդների հարազատներն ու մերձավորներն են: Սակայն, կարծում ենք, ոչ բոլորը հնարավորություն ունեն Յապստանի Հանրապետության և ԼՂՀ տարբեր վայրերից հասնել այստեղ: Ինչպե՞ս են, ուրեմն, հիվանդի հարազատները, զանգվածային լրատվամիջոցները տեղեկատվություն ստանում:

- Օնոկները, հարազատներն անհանգստանում են... Գլխավորը, իհարկե, հեռախոսային կապն է: Ե՛վ ես, ե՛լ մեր բուժաշխատողները սիրահոժար պատասխանում ենք զանգերին, սպառիչ տեղեկություններ տալիս:

Լրագրողներն են շատ այցելում, բոլորին հետաքրքիր է վիրավոր զինվորների ճակատագիրը: Նրանք էլ պետք է ունենան ԼՂՀ ՊԲ-ի համապատասխան վարչության թույլտվությունը: Այս պահին էլ լրագրողներ կան մեզ մոտ Երեւանից, այստեղ է նաեւ Ցվետանա Պասկալեւան:

- Մենք քիչ հետո կմտնենք հիվանդասենյակներ և կզրուցենք հիվանդների հետ, բայց կուզենա՞յինք Ձեր դիտարկումներն իմանալ՝ ինչպե՞ս են վիրավոր զինվորների տրամադրությունն ու հոգեվիճակը:

- Մարտական են տրամադրված, կարոտում են իրենց ընկերներին, ուզում են շուտ ապաքինվել և վերադառնալ դիրքեր:

Հպարտանալու տղերք ունենք: Ռազմական գործողությունների էսկալացիայի ժամանակ եղան զինվորներ, ովքեր առանց ապաքինվելու խնդրում էին իրենց տեղափոխել դիրքեր...

- Ձեր խնդիրների մասին չխոսեցինք...

- Մեր հոսպիտալն իրադարձությունների յուրաքանչյուր զարգացման դեպքում պատրաստ է իր առաքելությունը պատվով կատարել, թեև ցանկալի չեն ռազմական գործողությունների վերսկսումն ու ծավալումը:

- Ձեզ շնորհակալություն և հաջողություն, բոլոր հիվանդներին՝ շուտափույթ ապաքինում:

Զրույցը՝ ՍՍՍԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Ցավում ենք եւ հպարտանում...



2016 թ. ապրիլի 4-ին ԼՂՀ Մարտակերտի շրջանում հակառակորդի հրետակոծության հետևանքով զոհված սյունեցի ութ կամավորականին, որպես հավերժի ճամփորդ, ցավալի այդ միջադեպի հետևանքով երկնային կյանքում միացավ Ծղուկ գյուղից որպես կամավորական մեկնած Արմեն Արեգի Յովհաննիսյանը:

Արմեն Յովհաննիսյանը ծնվել է 1978թ. մայիսի 13-ին Ծղուկում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ զորակոչվել է նոր կազմավորված հայոց բանակ և ծառայել ԼՂՀ-ի տարածքում: 1996թ. Քարվաճառում ականի պայթյունի հետևանքով կորցրել է աջ թեւը: 1997թ. ընդունվել է Սիսիանի պետա-

կան հումանիտար քոլեջի իրավագիտության բաժին: 2010թ. ընտրվել է Ծղուկի ավագանու անդամ, և հետագայում երկրորդ անգամ վերընտրվել: Աշխատում էր «Սինգլ Գոռ» ՍՊԸ-ի («Սանդղաբլուր» ՓԲԿ) տնօրենի տեղակալ:

Ինչպես բնութագրեց Արմեն Յովհաննիսյանին գյուղապետարանի աշխատակցուհի Կարինե Խալաթյանը. «Ազնիվ, ընկերասեր, խելացի ու պատրաստակամ երիտասարդ էր: Երբեմն ինքնաճանաչվելու փաստը չի օգտագործել սեփական շահերի համար: Հի եղել մի դեպք, որ գյուղացիներից մեկը դիմի նրան՝ օգնության համար, և նա մերժի»:

Ծղուկի գյուղապետ Մեսրոպ Ամիրջանյանից տեղեկացանք, որ Արմենը ե՛րբ և՛ անդամ էր և՛ ընտանի-

քի անդամներին չէր զգուշացրել, որ մեկնում է ռազմաճակատ: «Կարելի է ասել, ես կորցրի իմ որդուն, գյուղի լավագույն երիտասարդին, ով մարդասիրության, ազնվության ու բարության մարմնացում էր: Իհարկե, վերջին օրերին ունեցած մարդկային կորուստները վշտացնում են բոլորիս, բայց գյուղում մարտական ոգին է իշխում: Մեր համայնքից նույնպես անհրաժեշտ պարագաների ու չոր սննդի ծանրոցներ ուղարկեցինք սահմանում կռվող կամավորներին ու զինվորներին», - նշեց համայնքապետը:

Արմեն Յովհաննիսյանի հնգամյա որդին կիպարտանա իր հոր հայրենասիրությամբ և մարտական ոգով՝ ժառանգելով նրա բնավորության լավագույն գծերը:



2015-ի հունվարին Նարեկ Մկրտչյանը Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Որոտանի դպրոցն ավարտելուց հետո զորակոչվեց պարտադիր զինվորական ծառայության: Տասը ամիս հետո զինվորական համազգեստը կփոխարինեց քաղաքացիականով և նեցուկ

կկանգնեց մենատնտեսությամբ զբաղվող իր ծնողներին: Ընտանիքի երեք զավակներից մեկն էր, բայց նախախնամության կամոք դարձավ հավերժի ճամփորդ: Որոտանի դպրոցի տնօրեն Արա Գրիգորյանն իրենց շրջանավարտին բնորոշեց որպես ֆիզիկապես ամուր, ընկերասեր, պատվախնդիր երիտասարդ: Հակում ուներ դեպի գյուղատնտե-

սական աշխատանքները: ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված «Կորյուն» ռազմամարզական խաղերի ժամանակ մեկ կմ վազատարածությունում հաղթող էր ճանաչվել:

Ապրիլի 7-ին Որոտան գյուղը մեծով ու փոքրով դեպի հավերժություն ճամփեց իր նահատակ զավակին:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Լարաբաղա-ադրբեջանական շփման գծում վերսկսված ռազմական գործողությունների առաջին օրը մարտի մեջ էր տանկիստ, սերժանտ Նորիկ Ժորայի Գասպարյանը: Ավաղ, տանկը, որում գտնվում էր նա իր երկու զինակիցների հետ, խոցվեց թշնամու արկից: Ընդամենը 20 ցարուն էր բոլորել, փետրվարի 10-ին հայրենիքի պաշտպանը դարձավ 20 տարեկան և շատ իղձեր ուներ իրականացնելու...

Նորիկ Գասպարյանը 2013-14 ուստարում ավարտել է Կապանի N3 միջնակարգ դպրոցը, 2014-ի հուլիսի 18-ին պարտադիր զինծառայության մեկնելու ծանուցագիր ստացավ: Սինչ այդ հասցրել էր ընդունվել Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի բաժինը:

Հոկտեմբերյանում տեղակալված զորամասում տանկիստի մասնագիտություն ստանալուց հետո նրան շնորհվել է սերժանտի զինվորական կոչում, որից հետո

ընդգրկվել է Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի N զորամասում՝ որպես տանկի իրամանատար: Իրեն դրսևորել է կարգապահ և գրագետ զինվոր: Հրամանատարների կողմից տրված հրամանները կատարել է բարձր պատասխանատվությամբ և ժամանակին, ինչի համար վայելել է թե՛ հրամանատարների, թե՛ զինակիցների սերն ու հարգանքը: 2016-ի ապրիլի 2-ին հակառակորդի հանկարծակի հարձակման ժամանակ սերժանտ Գասպարյանը իր տանկով մարտի է ելել թշնամու հակազորող կասեցնելու: Հերթական առաջադրանքը վերջինն էր նրա զինվորական կյանքում: Ցուցաբերած խիստախիզան համար ԼՂՀ նախագահի իրամանագրով պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

«Անմիջական բնավորություն ունեցող, չէր փայլում առաջադիմությամբ, բայց նախածեռնող էր, հրաշալի պարուն էր, միջոցառումներ կազմակերպում, ավելի ոգեւորված «Քոչարի» էր պարուն՝ երեւի նկատի ունենա-

լով, որ հաղթանակած հայ զինվորը Բեռլինում «Քոչարի» է պարել», - վերհիշում է դպրոցի տնօրեն Եղիկ Բեգլարյանը: Իրենց շրջանավարտի մահը խորին վշտով էր համակել կրթօջախի մանկավարժական կոլեկտիվին:

«Ոչ թե խոսքով, այլ պարով էր գրավում մարդկանց, նրա մարդկային տեսակն ուրիշ էր, իմ աջ ձեռքն էր, օգնականներ ունեն, բայց ոչ մեկ չի փոխարինի Նորոյին, արդեն պարուսույց էր դարձել, չեն կարող ասել, թե որքան ժամանակ հետո լույս աշխարհ կգա նման մի շնորհալի պարող, մշակույթի կենտրոնն իրենով էր շնչում: Անեն հանձնարարություն կատարում էր պարտաճանաչորեն, առանց պարտադրանքի: Նորոն բոլորիցս գնաց», - իր սանի մասին ավստասնքով ու ցավով է պատմում Կապանի մշակույթի կենտրոնի «Պարի աստղեր» շոու ստուդիայի զեղարվեստական ղեկավար Երիկ Քոչարյանը:

Վերջին հրաժեշտը

Ապրիլի 9-ին Կապանը հրաժեշտ տվեց դարաբաղա-ադրբեջանական շփման գծում նահատակված երկու զավակներին՝ ժամկետային զինծառայող, սերժանտ, 20-ամյա Նորիկ Գասպարյանին և պահեստազորի ավագ լեյտենանտ, 42-ամյա Արմեն (Մակիչ) Գասպարյանին:

Նրանց աճյունները տեղադրված էին երկրապահ կամավորների միության Կապանի բաժանմունքի մոտ: Սգո հավաքում, որին մասնակցում էին հարյուրավոր կապանցիներ, հիշատակի խոսքով հանդես եկավ Կապանի զինկոմ, փոխգնդապետ

Լեոնիդ Գրիգորյանը: Նա մասնավորապես այն միտքը հայտնեց, որ մեր ազգի ճակատագիրն այնպես է դասավորվել, որ ժամանակ առ ժամանակ զինվորը զենք է վերցնում, պաշտպանում իր օջախը, բայց նաեւ իր կյանքը դնում հայրենիքի փրկության զոհասեղանին: Ապրիլի 3-ին կապանցի երկրապահները հավաքվել էին նույն այդ տեղում և իրար հերթ չէին տալիս՝ հերթազրվելու և դարաբաղա-ադրբեջանական շփման գծում կռվող զինվորների կողքին լինելու համար: Առաջիններից մեկը պահեստազորի ավագ լեյտենանտ Արմեն Գասպարյանն էր: Ցավոք, երբ օր հետո զոհվեց մարտական հեմակետում...

Տանկի իրամանատար, սերժանտ Նորիկ Գասպարյանը, ով ամռանը պիտի զորացրվեր, պատերազմի վերսկսման առաջին պահերից ռազմադաշտում էր և մարտի նետվեց թշնամուն հետ շարտելու: Ցավոք, հայրենիքի պաշտպանները այլևս չեն կարող իրենց արածի համար խոսք լսել... Լեոնիդ Գրիգորյանը նախ երկայացրեց զոհվածների կենսագրականներն ու մարտական ուղին, այնուհետև հրապարակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի իրամանագիրը, ըստ որի՝ ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար հետմահու պահեստազորի ավագ լեյտենանտ, երկրապահ կամավորների միության անդամ Արմեն Գասպարյանը պարգևատրվել է «Արիության համար», սերժանտ Նորիկ Գասպարյանը՝ «Մարտական ծառայություն» մեդալով:

Սգո հանրահավաքի մասնակիցների հաջորդ հանգրվանը Բաղաբուրջի հուշահամալիրն էր: Դանբանական խոսք ասաց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը: «Ընկած տղաների համար սգում է Սյունիքը, բայց, համոզ-

ված են, որ դրա մեջ անթաքույց հպարտություն կա, քանզի ընկան զենքը ձեռքին», - ասաց նա և հավելեց, որ հուշահամալիրում մնչում է Արցախյան գոյամարտի 133 մասնակից, որոնց շնորհիվ նաեւ ազատագրվեցին Հայաստանի պատմական տարածքներ, բնակաճաքար, այդ ամենը պիտի պաշտպանվեին, ինչը նաեւ զոհեր է պահանջում, ինչպես եղավ ապրիլյան չորս օրվա ընթացքում: Մարզպետը նաեւ համոզմունք հայտնեց, որ ընկածների կիսատ թողած գործը կշարունակվի, ինչը հարգանքի տուրք կլինի Արմենի և Նորիկի հիշատակին:

Հոգեհանգստյան արարողությունից հետո, որը կատարեց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեթոյանը, զինվորական պատիվներով զոհվածների աճյուններն ամփոփվեց մայր հողում:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

# ԼԵՈՆԻԴ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Ամեն ինչ ռազմաճակատի համար»

Ապրիլյան իրադարձությունների հետ կապված Կապանի տարածաշրջանից մեկնած առաջին կամավորական ջոկատին հերթափոխելու, բանակում տիրող իրավիճակի եւ հետագա անելիքների մասին է գրույցը Կապանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանի հետ:



– Ապրիլի 3-ին Կապանից մեկնած կամավորական ջոկատի հերթափոխի մասին ի՞նչ տեղեկություններ կան:

– Հերթափոխի գործընթացը կազմակերպել են Կապանի քաղաքապետ Աշոտ Չայրապետյանի գլխավորությամբ եւ ԵԿՄ Կապանի մասնաճյուղը՝ Մանվել Օհանյանի ղեկավարությամբ: Հաշվի առնելով, որ արդեն բավական ժամանակ է անցել կամավորների՝ մարտական գործողությունների գոտում գտնվելու օրից, կենցաղային պայմաններից, հոգեվիճակից ելնելով՝ կազմակերպիչները նպատակահարմար համարեցին հերթափոխ կազմակերպել: Մարդիկ պիտի հանգստանան՝ անհրաժեշտության դեպքում դիրքեր վերադառնալու համար: Ապրիլի 10-ին կամավորների մեկ խումբ, քաղաքապետի գլխավորությամբ, մեկնեց Մարտակերտ, բայց, իմ տեղեկություններով, ԼՂՀ-ում առաջացած որոշ խնդիրների հետևանքով մասամբ է թուլատրվել կատարել հերթափոխ: Թե ինչպիսի խնդիրներ են առաջացել այնտեղ, ես տեղյակ չեմ: Կամավորների ճակատ մեկնելը զինկոմիսարիատում հրամանային փաստաթղթերով ձեռակրպակած գործընթաց չէ:

– Ո՞րն է այս օրերին զինկոմիսարիատի դերակատարությունը:

– Չինկոմիսարիատը մարտական բարձր պատրաստվածության աստիճանի է բերված եւ կատարում է հանրապետական զինկոմիսարիատի, գլխավոր շտաբի հանձնարարականները՝ մարդկային, տրանսպորտային ռեսուրսների հետ կապված: Նաեւ կամավորական խմբավորումների կազմավորման գործում մասնագիտական աջակցություն ենք

ցուցաբերում: Բոլորս տեղյակ ենք, որ Կապանն ապրիլյան իրադարձությունների հետևանքով երեք զոհի եւ չորս վիրավոր տվեց: Մեզ հանձնարարված էր զոհվածների ընտանիքներին աջակցություն ցուցաբերել, պատշաճ մակարդակով կազմակերպել նրանց թաղման արարողությունը:

– Կապանի տարածքային զինկոմիսարիատը պահեստազորից մա՞րդ է գորակոչել:

– Դրանք գաղտնի տվյալներ են եւ հրապարակման ոչ ենթակա: Միայն կարող եմ ասել, որ մեր զինկոմիսարիատն այս պահի դրությամբ բոլոր հանձնարարականները կատարել է 100%-ով:

– Որքանով տեղյակ ենք, պաշտոնական գորահավաքի հրաման չի եղել:

– Ձորահավաքի հրաման չի եղել, չի էլ լինելու, որովհետեւ հակառակորդը Հայաստանի Հանրապետության վրա չի հարձակվել: Բայց մենք, անկախ որոշ մարդկանց ստեղծած խոչընդոտներից, համապատասխան կառույցների եւ նրանց ղեկավարների միջոցով կատարում ենք մեզ տրված հանձնարարականները:

– Առաջին օրերի ակտիվությամբ շարունակվո՞ւմ է կամավորների ցուցակագրումը:

– Այս պահին նույնպիսի ակտիվությամբ չի կատարվում ցուցակագրում, բայց առաջին օրերին ցուցակագրված բավականին շատ կամավորներ ունենք: Նույնիսկ մասնագիտությամբ բուժքույր երեք աղ-

ջիկ է ներկայացել զինկոմիսարիատ՝ անհրաժեշտության դեպքում ռազմաճակատ մեկնելու համար:

– Այս օրերին եղե՞լ եք մարտական դիրքերում:

– Ցանկություն եմ ունեցել մեկնել դիրքեր, սակայն վերադասից համապատասխան թույլտվություն չեմ ստացել:

– Ինչպե՞ս եք զնահատում ստեղծված իրավիճակը:

– Ես արդեն 22 տարի է՝ իմ ելույթներում, ամենօրյա գրույցներում մշուս եմ, որ մենք այս օրվան հանդիպելու ենք: Երանի սխալված լինելի, բայց... Մենք պիտի ավելի զգոն լինենք. հայ ժողովուրդը միշտ էլ պատերազմական վտանգի առջև է եղել: Մենք այլ ճանապարհի չունենք, պիտի պատերազմ լինի, որպեսզի կարողանանք մեր ճանապարհն անցնել: Ամեն ինչ առաջին հերթին բանակի ու ռազմաճակատի համար պիտի լինի: Ցավալի մի իրողություն եւս կա. մարդիկ կան, ովքեր իրենց կյանքն են տալիս հանուն հայրենիքի, իսկ ոմանք նույնիսկ իրենց մեքենան հարկ եղած դեպքում պատրաստ չեն ծառայեցնել հանուն հայրենիքի: «Ամեն ինչ ռազմաճակատի համար» կարգախոսով պիտի առաջնորդվել...

– Որպես ռազմական բնագավառի գործիչ՝ կարո՞ղ եք ասել, թե որքանով էինք մենք պատրաստ ստեղծված իրավիճակին:

– Պատրաստ էինք մեր ուժերի, հնարավորությունների եւ հասկացողության չափով, բայց պիտի պատրաստ լինեինք դրա կրկնապատ-

տիկի չափով: Եթե ճանապարհ ես գնում, պիտի նաեւ այդ ճանապարհն անցնելու երկրորդ տարբերակն էլ ունենամ: Մեր զինվորները, սպայական անձնակազմն արժանի հակահարված են տվել հակառակորդին, փառք ու պատիվ նրանց: Միշտ էլ նման տղաների շնորհիվ է կերտվել մեր ազգի ճակատագիրը: Նրանք զոհվել են, բայց մեկ քայլ անգամ չեն նահանջել: Չնայած հակառակորդն առաջին օրերին որոշակի հաջողություն է գրանցել, բայց դա հաղթանակ չի կարելի համարել: Երբ մի ամբողջ բանակ հարձակվում է մեկ կետի վրա եւ որոշակի հաջողություն գրանցում, դա դեռ հաղթանակ չէ: 18-ամյա մեր զինվորի քայլերն ինձ չեն զարմացնում. դեռեւս 1992-94թթ. պատերազմի ընթացքում եմ համոզվել նրանց խիզախության, մարտական ոգու ու պատրաստակամության մեջ: Պարզապես անհրաժեշտ են խելացի ու պատրաստված հրամանատարներ մեր զինվորների ներսը ճիշտ ու նպատակային օգտագործելու համար: Այսօրվա մեր կատարածը վաղը չի երեւալու, դրա պտուղները կբաղենք 15-20 տարի հետո:

– Փաստորեն 18-ամյա զինվորի պատրաստակամության նկատմամբ ունեցած մտավախությունն ի չիք դարձավ:

– Երբեւէ համաձայն չեմ եղել այն կարծիքին, թե այսօրվա զինվորը պատերազմական իրավիճակում չի կարողանա ճիշտ կողմնորոշվել, եւ վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ չեմ սխալվել: Ես համաձայն չեմ եղել նաեւ այն հարցադրումին, որ եթե պատերազմ լինի, ո՞վ է մեկնելու ռազմաճակատ: Այսօր ավելի շատ մարդ է մեկնել ռազմաճակատ, քան 90-ականների պատերազմի ժամանակ: Ուրթի է կանգնել ողջ հայ ժողովուրդը: Նա, ով ինչ-ինչ խնդիրների պատճառով չի կարողացել մեկնել մարտի դաշտ, նույնիսկ արտասվել է՝ ասելով՝ ես պետք եմ բանակին:

– Կամավորների պատրաստվածությունն արդյո՞ք անհրաժեշտ մակարդակի վրա է. չէ՞ որ նրանցից շատերը երկար տարիներ է՝ ռազմական գործի հետ որեւէ առնչություն չեն ունեցել:

– Մարտի դաշտ մեկնած կամավորներն արդեն իսկ պատերազմի բովով անցել են եւ քաջ գիտակցում են՝ ինչ ասել է պատերազմ: Իմ կարծիքով՝ Կապանից մեկնած կամավորները պիտի հարավարելեւյան ուղղության պաշտպանությանը մասնակցեին, քանի որ տեղանքին քաջ ծանոթ են, գիտեն, թե հակառակորդը հնարավոր որ ուղղություններով կարող է դիվերսիոն գործողություն ծավալել եւ այլն: Բայց սա միայն իմ կարծիքն է, հրամանատարությունը որտեղ նպատակահարմար է գտնում, այնտեղ էլ պիտի ուղարկի կամավորական ջոկատներին: Ինչ վերաբերում է գորահավաքային գործընթացի կազմակերպմանը, ապա այս հարցը վերանայման եւ լուրջ փոփոխությունների կարիք

ունի:  
**II** Կոմկրետ պատերազմական իրավիճակում բանակը համալրելու ձեռաչափը պիտի փոխենք: Ես կարծում եմ, որ իրենց ցանկությամբ հավաքագրված մարդկանց հետ համապատասխան պայմանագրային պարտավորությունների շրջանակներում պիտի պարբերաբար աշխատանքներ կատարել՝ նրանց ապահովելով համապատասխան միջոցներով: Այդ մարդիկ ժամանակ առ ժամանակ պետք է համապատասխան կուրսեր անցնեն եւ ամեն վայրկյան, անկախ գտնվելու վայրից, կարգավիճակից, պատրաստ լինեն մարտական գործողությունների:

– Արդյո՞ք 1990-ականների պատերազմը եւ ներկայիս մարտական գործողությունները կարելի է նմանեցնել:

– Միանշանակ ոչ: Իմ կարծիքով՝ մեզ արմատական փոփոխություններ են անհրաժեշտ: 1982թ.-ից ռազմական բնագավառում գործունեություն են ծավալել, եւ իմ փորձն ինձ թույլ է տալիս գալ նման եզրահանգման: Առհասարակ հասարակության մեջ պետք է ձեռավորվի ռազմական մտածողություն: Չի կարելի մարդուն ոչնչով չապահովել, բայց փոխարենն ինչ-որ բան պահանջել: Մարդը չպիտի ծառայի կոմկրետ անհատների զնահատականերին արժանանալու համար, այլ պիտի ծառայի սերունդներին օրինակ դառնալու գիտակցումով: Անհատական մոտեցումներն ընդմիջ տ պիտի վերանան:

– Ձեր ամփոփիչ խոսքը:

– Իմ կարծիքով՝ բոլորս պատրաստ ենք թշնամու հերթական ոտնձգությանն անհրաժեշտ հակահարված տալու: Ժողովուրդը հասկանում է ձեռք բերածի արժեքը եւ չի ուզում կորցնել այն, ինչ արդեն ունի: Նա պատրաստ է զոհվել, բայց ապահովել Արցախի պաշտպանությունն ու անվտանգությունը: Իսկ որպես զինկոմ՝ կոչ եմ անում մարդկանց հատկապես պատերազմական իրավիճակում կատարել մեր կողմից տրված հանձնարարականները: Եթե որեւէ մեկը թերանում է այս օրերին իր պարտավորությունները կատարելու մեջ, ապա համարձակվում եմ կասկածի տակ դնել նրա ինքնությունն ու ազգային պատկանելությունը: Բոլորս պիտի թիկունքից մեցուկ լինենք ճակատին, յուրաքանչյուրս կատարենք մեր պարտավորությունները, որ կարողանանք ապահովել մեր երկրի հետագա զարգացման ընթացքը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
13 ապրիլի 2016թ.

«ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տարեկան հաշվետվությունը

Համաձայն «Ձևագվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի՝ ներկայացնում ենք «Այունյաց երկիր» թերթի 2015թ. ֆինանսական հաշվետվությունը (դրամով):

Համախառն եկամուտ՝ ..... 20 998 274

**Այդ թվում՝**

Նվիրատվություն՝ ..... 0

Սուբսիդիա՝ ..... 500 000

Գովազդ (առանց ԱԱՀ-ի)՝ ..... 3 139 000

**ՎԱՏԱՌՎՈՒՄ Է** մեկ սենյականոց բնակարան Քաջարան քաղաքի Խանջյան փողոցի չորս հարկանի շենքի 3-րդ հարկում: Ցանկացողները զանգահարեն 091 98 40 95 հեռախոսահամարով:

**Այունյաց երկիր**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՄԱՐԱԿԻՉ  
**«ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**  
ՍԱՀՄԱՆՍԵԿ ՊԱՏԱՆԱՏԱՎՈՒԹՅԱՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝  
**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Ֆեռ.՝ (0285) 5 25 63,  
(091) 45 90 47,  
(077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerker@mail.ru  
Էլ. կայք՝ www.syuniacyerker.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 14.04.2016թ.: